ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ», «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՎ «ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №530Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի ապրիլի 23-ի №112Ա, №113Ա և №114Ա որոշումներով «ՄՏՍ Հայաստան», «ՅՈՒՔՈՄ» և «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) ճանաչվել են իրենց հանրային շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ,

բ) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №473Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան սահմանում է Հանձնաժողովի կողմից անհատական հանրային ամրակցված կամ շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման կարգը (այդ թվում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների սահմանման բանաձևը), որի համաձայն՝ նշված վճարների հաշվարկման համար անհրաժեշտ միջազգային համեմատելի ցուցանիշների տվյալների հավաքագրման համար հիմք է ընդունվում տվյալ

տարվան նախորդող տարվա երկրորդ կիսամյակում էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակվող՝ հրապարակման տարվա հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցը,

գ) էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակված՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցի համաձայն՝ «զուտ ներքևից դեպի վեր երկարաժամկետ հավելյալ ծախսերի հաշվարկման» (Pure BU-LRIC) մեթոդով փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարներ կիրառող եվրոպական երկրների (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Գերմանիա, Դանիա, Հունաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Հյուսիսային Մակեդոնիա, Մալթա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Շվեդիա, Սլովենիա, Սլովակիա, Միացյալ Թագավորություն) շարժական կապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների պարզ միջին մեծությունը կազմում է 0,69 եվրոցենտ/րոպե,

դ) 2020 թվականի հուլիսի 15-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված 1 եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունը կազմում է 553,64 դրամ՝ և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» և 2-րդ կետի «է» ենթակետերը, 37-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ, 7-րդ կետերը և 7-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանել 3,82 դրամ/րոպե (առանց ավելացված արժեքի հարկի):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված առավելագույն վճարից ցածր վճար կիրառելու դեպքում Ընկերությունները ապահովում են դրանց համաչափ (միևնույն վճար) և ոչ խտրական կիրառումը իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի հետ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նկատմամբ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական և «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանելու մասին» №530Ա որոշումը։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2020թ.